

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՆԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ՉԻՔ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Հայերս՝ մեր շուրջ 5 հազար տարուայ պատմութեան ընթացքում լեզուի ժողովուրդ ենք եղել, և այսօր, երբ դարերի բաւիղում փնտում ենք հայ ժողովրդի գոյութեան հետքերը, այդ անում ենք 99 տոկոսով հայոց լեզուի հետքերը փնտոելով ու գտնելով: Կան ժողովուրդներ, որոնց տարբերակման գործում լեզուն ոչ միակն է, ոչ էլ գլխաւորը: օրինակ, արգենտինացիներն ուրուգվայցիներից լեզուով չեն տարբերում, նոյնը և՝ ամերիկացիներն անգլիացիներից, թէև դրանք չորսն էլ տարբեր ազգեր ու ժողովուրդներ են ըստ քաղաքացիութեան և այլ յատկանիշների: Հայերս այդպէս չենք. մեր տարբերութիւնը թէ՛ հարեւան, թէ՛ ոչ հարեւան ժողովուրդներից լեզուական է՝ հայ ժողովուրդը հայոց լեզուի կրողն է, այսինքն՝ հայմտած, հայախօս ու հայագիր հանրութիւնը:

Հայոց լեզու նշանակում է հայերէնի բոլոր դրսեւորումները, հայոց բոլոր բարբառները, ժողովրդախօսակցական հայերէնը և հայոց երեք գրական լեզունները՝ հինը, միջինը և նորը (վերջինն արեւմտեան և արեւելեան իր ճիւղերով): Մրանցից որեւէ մէկի կրող լինելը նշանակում է լինել հայոց լեզուի կրող, որ և միաւորում է մարդկանց իրեւ հայկական հանրութիւն: Ճիշդ է մեր աւագների տարբեր բառերով առաջարկած միեւնոյն բանաձեւը՝ հայ ժողովուրդ նշանակում է հայոց լեզու (Աւ. Խսահակեանը գրել

է նաեւ, որ Հայաստան նշանակում է հայոց լեզու):

Կենդանի լեզուն այն է, որ գործածւում է իրեւ հաղորդակցման միջոց՝ բանաւոր՝ գրաւոր և որով մտածողներ կան: Մեռած են կոչւում այն լեզուները, որոնցով այլեւս չեն հաղորդակցւում և չեն մտածում: Մարդկութեան հազարամեակների պատմութիւնը շատ փաստեր է տալիս լեզուների մահացման, և այդ մահացումը միշտ կատարուել է միեւնոյն կերպ, մարդկանց տուեալ հանրութիւնը սկսել է խօսել ու մտածել մի այլ հանրութեան լեզուով, իր լեզուն մոռացել է և այդ լեզուն դարձել է մեռած, իսկ ինքն՝ այդ հանրութիւնը վերացել է՝ ձուլուել է այն հանրութեան մէջ, որի լեզուի կրողն է ինքը դարձել Այդպէս են վերացել շումերները, ասուրաբարելացիները, թոխաթները, խեթերը, խուսիները և շատ ու շատ ուրիշ ժողովուրդներ: Հարաւ-արեւմտեան Ասիայում, որտեղ ընթացել է հայոց հինգհազարամեայ պատմութիւնը, ոչ մի դէպք չկայ այն բանի, որ մի ժողովուրդ վերանայ ցեղասպանութեամբ, կոտորածով, իսկ լեզուափոխութեան հետեւանքով ժողովուրդների վերացման անհաշիւ դէպքեր կան:

Որեւէ լեզու պահպանել նշանակում է պահպանել նրա որպէս հաղորդակցութեան և մտածելու կենդանի միջոց լինելը, այսինքն թոյլ չտալ, որ անցնի մեռած լեզուների շարքը: Այսօր մեծ ժողովուրդներն այսպիսի հարց չունեն, քանի որ նրանց լեզուները գործածութեան հսկայական ոլորտ ունեն, լիովին ապահով են գոյատեւելու տեսակչութից: Այդ ժողովուրդների ներկայացուցիչները յաճախ չեն էլ հասկանում լեզուն պահպանելու խնդիրը: Իսկ փոքր ժողովուրդներն ունեն այդպիսի հարց, որ յաճախ նրանցից շատերի թիւ 1 հիմնահարցն է:

Մասնաւորապէս հայոց լեզուն, ինձ պատկերանում է որպէս հայերի գոյութեան միակ գործոնն ու փաստը: Շատ եմ մտածել այս հարցի մասին: Գիտեմ, որ մեր ժողովուրդն ունի նաեւ ուրիշ ազգային յատկութիւններ՝ արտաքին կերպարանքը, հայեացքը, սովորութիւնները, արուեստը, մշակոյթը և այլն: Սակայն անժխտելի է, որ այդ բոլորի առկայութիւնը, բայց հայոց լեզուի բացակայութիւնը բացառում է հայ ժողովրդի գոյութիւնը, իսկ այդ բոլորի բացակայութիւնը, և միայն կենդանի խօսուող, մտածուող, գրուող հայոց լեզուի առկայութիւնը նշանակում է հայերի, հայ ժողովրդի գոյութիւն:

Վերլուծումներս բերել են այն եզրակացութեան, որ հայ ազգային միւս կարեւոր յատկանիշները՝ մանաւանդ մշակոյթն ու արուեստը, պայմանաւորուած են հայոց լեզուով: ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՆ ՄԻ ԱՌԱՆՑՔ է, ՈՐԻ ՎՐԱՅՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻՒՄ ԲՈԼՈՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՐԻԱԾ ԵՆ. ՀԱՆԵՆՔ ԱՌԱՆՑՔԸ, ԲՈԼՈՐԸ ԿԸ ԹԱՓՈՒԵՆ ՄԵՌԵԱԼ ՎԻՃԱԿՈՒՄ: Այլ առիթներով փորձել եմ ցոյց տալ որ անգամ հայկական ազգային ճարտարապետութիւնը, կերպարուեստը պայմանաւորուած են այն ստեղծագործողների հայամտած լինելով, էլ չեմ խօսում հայ երաժշտութեան մասին, որի պայմանաւորուած լինելը հայերէն խօսքով շատերն են ցոյց տուել:

Լեզուն պահպանել նշանակում է գործածել: Լեզուն թանկագին իր չէ, որ գնես ապահով արկղի մէջ ու պահպանես: Լեզուն նման է Լ. Տոլստոյի պատմուածքում նկարագրուած գործածուող խոփին, որը փայլում էր, իսկ չգործածուողը՝ ժանգոտում: Լեզուն ինչքան շատ է գործածուում և որքան շատ բնագաւառներում է գործածուում, այնքան լաւ է պահպանուում . . .

ՌԱ.ՖԱ.ՅԻԼ ԽԾԽԱՆԵԱՆ (1922-1995)